ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2016 թ.
№ 15 (1000)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 51 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շնորհավոր Վմանոր և Սուրբ Ծնունդ

Թող 2017 թվականը Ձեզ համար լինի ստեղծագործական նվաճումների, բարեկեցության և ընտանեկան երջանկության տարի:

Ավարտվեց «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը

Հայկական պետական մանկավարժական համալսարանում Երիտասարդության համաշխարհային և Ուսանողության միջազգային տոների շրջանակներում բուհի Ուսանողական խորհրդի և Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ կայացավ «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը:

Ահա նրանք՝ լավագույնները՝ Մանե Գագիկի Սևաչյան (Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ), Աշոտ Գագիկի Մկրտչյան (Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ), Ռոզա Գառնիկի Աբրահամյան (Օտար լեզուների ֆակուլտետ), Վարդուհի Խաչիկի Բաղդասարովա (Հատուկ կրթության ֆակուլտետ), Աստղիկ Ռոլանդի Բոյաջյան (Բանասիրական կրթության ֆակուլտետ), Արման Յուրիկի Թադևոսյան (Պատմության և իրավագիտության ֆակուլտետ), Մարիամ Խաչատուրի Հակոբյան (Կուլտուրայի ֆակուլտետ), Լիլիթ Տիգրանի Մայիլյան (Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ), Լալա Հովհաննեսի Սահակյան (Սկզբնական կրթության ֆակուլտետ), Էլինա Արարատի Մկրտումյան (Գեղարվեստական կրթության ֆակուլտետ):

Բուհի 10 ֆակուլտետների լավագույն ուսանողները պարգևատրվեցին նվերներով, որից հետո հրապարակվեց լավագույններից լավագույնը ճանաչվածի անունը՝ **Արման Թադևոսյան**, Պատմության և իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող:

Համալսարանի լավագույն ուսանողը որպես խրախուսանք ստացավ Հունաստան այցելելու հնարավորություն: Մրցանակաբաշխությունը շարունակվեց տոնական համերգով. ելույթ ունեցան Ֆորշը, Սոնա Շահգելդյանը, Սիլվա Հակոբյանը, Սոնա Ռուբենյանը, Սևակ Ամրոյանը և Գոռ Սուջյանը:

Ինչ է նշանակում լինել լավագույն ուսանող...

Հարցազրույց ՀՊՄՀ «Լավագույն ուսանող» Արման ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ հետ

- Արման, ակնկալո՞ւմ էիր, որ կդառնաս ՀՊՄՀ-ի 2016 թվականի լավագույն ուսանողը:

- Սպասելիքներ և ակնկալիքներ որոշակի առումով ունեի, սակայն չէի կենտրոնացել համալսարանի լավագույն ուսանողը դառնալու վրա, ինձ համար ֆակուլտետում լավագույնը ճանաչվելն արդեն իսկ մեծ պատիվ ու ձեռքբերում էր:

-Ի՞նչ զգացողություններ ունեցար, երբ լսեցիր քո անունը:

-Նախ և առաջ անչափ ուրախ էի, նաև, բնականաբար, որոշակի հուզմունք կար: Արդեն այսօր, երբ տոնական էմոցիոնալ դաշտից դուրս եմ եկել, բացի մեծ ուրախությունից, նաև մեծ պատասխանատվություն եմ զգում:

- Ինչպե՞ս հաղթահարեցիր ֆակուլտետային ընտրության փուլը:

-Ընտրությունը տեղի է ունեցել բուհի կողմից հատուկ սահմանված չափանիշներին համապատասխան, ըստ որի էլ ես կարողացա հաղթահարել մրցույթը:

Ուսանողական տարիներին եղել եմ ուսանողական խորհրդի ակտիվ անդամ, ֆակուլտետային բանավեճի ակումբի պատասխանատուն եմ, մասնակցել եմ ուսանողական խորհրդի տարբեր միջոցառումների՝ ներֆակուլտետային և միջֆակուլտետային, ինչպես նաև ինքս նախաձեռնել եմ մի շարք միջոցառումներ: Համալսարանից դուրս ևս ակտիվ գիտակրթական գործունեություն եմ իրականացնում՝ մասնակցելով հանրապետական և միջազգային մի շարք սեմինարների ու գիտաժողովների:

-Լավագույնի տիտղոսը կրելը ի՞նչ է քեզ համար:

- Դա ինձ համար մեծ պատիվ ու պատասխանատվություն է. կփորձեմ ամեն կերպ այդ կոչումն արդարացնել: Ինքս ինձ հարց եմ տվել՝ ինչ է նշանակում լինել լավագույն ուսանող և հանգել եմ այն մտքին, որ լավագույն ուսանողը առաջին հերթին օրինակելի ուսանողն է՝ և՛ վարքով և՛ առաջադիմությամբ: Լավագույն ուսանողը դա մոտիվացված ուսանողն է, ով մյուսների համար պետք է խթան հանդիսանա կրթական ոլորտում առավել առաջ գնալու և մեծ հաջողություններ գրանցելու համար:

-Ո՞րն է քո հաջողության գաղտնիքը:

- Գաղտնիքը երևի աշխատասիրությունն է, սովորելու մեծ ցանկությունն ու կամքի ուժը:

-Որպես լավագույն ուսանող՝ ի՞նչ ավելացավ քո պարտականություններին:

- Բազմաթիվ ծրագրեր ունեմ, սակայն դրանք դեռևս հստակ չեն այս պահին: Կարծում եմ, որ այդ կոչումն ինձ կօգնի անձնական և մասնագիտական կյանքում հաջողության հասնելու համար, վստահ եմ, որ առավել կօգնի կյանքում կայանալու հարցում:

Կարծում եմ յուրաքանչյուր ուսանող պետք է ձգտի լավագույնը լինելու կոչմանը:

- Ի՞նչ են տվել քեզ ուսանողական այս երեք տարիները:

-Համալսարանի և մասնագիտությանս ընտրությունը պատահական չի եղել: Մանկավաժական համալսարանը ՀՀ-ի լավագույն բուհերից մեկն է: Սպասելիքներս մեծ են եղել և ի ուրախություն ինձ՝ բոլորն էլ արդարացվել են շատ ավելի, քան ունեի:

- Ի՞նչ կմաղթես ուսանողներին:

- Ուսանողական տարիները մարդու կյանքի կարևորագույն շրջաններից մեկն է, և յուրաքանչյուր ոք, ով կրում է ուսանողի այդ բարձր կոչումը, ինչ-որ տեղ նաև էլ ավելի պարտավոր է ուսանողական կյանքն անցկացնել հագեցած, հետաքրքիր՝ միաժամանակ ցուցաբերելով ուսման մեծ ձգտում և հասարակական ակտիվություն:

Բոլորին խորհուրդ կտամ մասնակցել «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությանը, երբևէ չկորցնել հավատը, լինել աշխատասեր և նպատակասլաց:

Զրույցը Սոնա ԱՐԱՄՅԱՆԻ

Տարվա ձեռքբերումները

Միեր Մելիք-ԲԱԽՇՅԱՆ
Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր

Տարվա կարևորագույն ձեռքբերումներից պետք է արձանագրել նախ և առաջ այն փաստը, որ մանկավարժական մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրի 2016-2017 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականի ձևավորման արդյունքում հաշվի կառնվի մանկավարժական պրակտիկայի բոլոր շրջափուլերի միջին գնահատականը: Նոր ուսումնական պլաններով ամրագրված է, որ մանկավարժական պրակտիկայի յուրաքանչյուր շրջափուլ ավարտվում է պրակտիկայի արդյունքների պաշտպանությամբ: Սա նորություն է ուսումնական գործընթացում, լիահույս ենք, որ արդյունքները կլինեն դրական, և 2016-2017 ուստարվա շրջանավարտները կդառնան այս նորամուծության կրողները: Մանկավարժական պրակտիկայի հիմնական նպատակը ուսանողների, որպես ապագա մանկավարժների՝ մասնագիտական կարողությունների և կարիերայի կողմնորոշումների զարգացումն է, և համալսարանում խիստ կարևորվում է պրակտիկայի հստակ կազմակերպումն ու արդյունավետ իրականացումը:

Ի տարբերություն նախորդ տարվա, 2016-2017 ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման ավարտական քննությունների անցկացման էլեկտրոնային համակարգը կներդրվի բոլոր մասնագիտությունների գծով, բացի արվեստի մասնագիտություններից:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և ժամանակակից բարձր տեխնոլոգիաների դարում պարզապես անհնար է ետ մնալ այդ գործընթացներից. համալսարանում ներդրված Google classroom-ը այն հարթակն է, որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային կապ ստեղծել դասախոսի և ուսանողի միջև: Դասախոսը կազմակերպում է ուսումնական գործընթացն այնպես, որ ուսանողն ինքը ծավալի ակտիվ ուսումնառություն և ներգրավված լինի ուսուցման բոլոր փուլերում՝ նյութի ձեռքբերումից մինչև արդյունքի գնահատում, հստակ պատկերացնի իր մասնագիտական նպատակները և կարողությունները: Այստեղ ուսանողը նախապես կարող է ստանալ հաջորդ օրվա դասի մասին տեղեկատվություն, կատարել առաջադրանքներ, ներկայացնել հարցադրումներ: Google Classroom հարթակը մեծապես նպաստում է դասի արդյունավետությանը, ինչպես նաև սովորողների համագործակցային կոմպետենցիաների զարգացմանը:

Կրթական բարեփոխումները հիմնականում ընդգրկում են բովանդակային հիմնահարցեր՝ նոր ուսումնական ծրագրեր, սովորողների ուսումնական արդյունքների գնահատման և քննությունների նոր համակարգ, ՏՀՏ ներառում ուսումնական գործընթացում և այլն:

Մանկավարժական համալսարանի 10 ֆակուլտետների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի բոլոր կուրսերում դասերն անցկացվում են ժամանակակից տեխնիկական տարբերի միջոցների կիրառմամբ, որոնց առկայությամբ սովորողները ակտիվորեն փոխգործակցում են և մեծանում է դասի հանդեպ նրանց հետաքրքրությունը: Դասերն ուղեկցվում են մուլտիմեդիային ներկայացումներով, առցանց (on-line) թեստերով և ծրագրային փաթեթներով, մի հանգամանք, որը դասը դարձնում է առավել մատչելի ու տեսանելի և թույլ է տալիս ուսանողներին խորացնել նախապես ստացած գիտելիքները:

Էլեկտրոնային կառավարման համակարգը համալսարանում անընդհատ զարգանում ու կատարելագործվում է, և ներկայումս կազմակերպվող ուսումնական բոլոր գործընթացները կատարվում են էլեկտրոնային շրջանառության միջոցով, այդ թվում՝ ամբիոնների ծավալ-ծանրաբեռնվածությունը, տեղեկագրերը:

Հաշվի առնելով աշխատաշուկայի և հանրակրթական ծրագրերին համահունչ մասնագետներ պատրաստելու արդի հրամայականը՝ համալսարանում մի շարք նոր մասնագիտություններ են ներդրվել. 2016-2017 ուսումնական տարում համալսարանի մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտություններին ավելացավ ևս մեկը՝ «Հասարակագիտություն»-ը: Այս տարի ընդունելություն է կատարվել վերոհիշյալ մասնագիտության դիմորդների համար, և տարբեր կրթական ծրագրերով 40 հոգի ընդունվել է համալսարան: Նշեմ նաև, որ ՀՀ բուհերի 2017-18 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկում ներառվել են «Շախմատ», «Շրջակա միջավայրի գիտություն», «Լանդշաֆտային պլանավորում» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:

Ամփոփելով խոսքս՝ ավելացնեմ, որ այս տարի Մանկավարժական համալսարան ընդունվածների թիվը (2585 ուսանող) գերազանցում է նախորդ տարվա (2534 ուսանող) ցուցանիշին: Դա վկայում է այն մասին, որ մանկավարժի մասնագիտությունը աշխատատեղերի սղության պայմաններում դեռևս պահանջարկ և հետաքրքրություն է ներկայացնում:

Վերոնշյալ բարեփոխումները միանշանակ հարթ ու անշեղորեն չեն ընթանում, հաճախ տեղապտույտներ են ունենում և առաջ են բերում տարակարծություններ: Մի բան միայն հաստատ է, որ բարեփոխումների ընթացքը անշրջելի է: Կարևորվում է այն, որ դրանք ավելի շատ թելադրված լինեն մեր համալսարանի խնդիրներով և առաջադրված նպատակներով:

Տարվա ձեռքբերումները

Սրբուհի Գևորգյան
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր

Մանկավարժական համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքները, որպես կանոն, հիմնարար բնույթ են կրում, իսկ դրանց արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուների, պարբերականների, գրքերի և ինֆորմացիայի տարածման այլ միջոցներով: 2016 թվականին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակվել են 620 հոդված, որից 220-ը հղումով (ցիտվող) (SCOPUS, РИНЦ... և այլն) պարբերականներում, 17 մենագրություն, 65 ձեռնարկ, 49 գիրք:

Այս տարի համալսարանում իրականացվել են 9 բազային և 2 թեմատիկ ֆինանսավորվող գիտական ծրագրեր, որտեղ ընդգրկված են եղել մոտ 50 գիտնականներ:

Մանկավարժական համալսարանում այս տարի էլ իրականացվեցին միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցեցին համաշխարհային ճանաչում և հեղինակություն ունեցող մասնագետներ՝ տարբեր ոլորտներից: Մանկավարժական համալսարանի, ՀՀ Գիտության պետական կոմիտեի և Կրթության ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ անցկացվեց «Մաթեմատիկական կրթություն» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողովը:

«Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխումները ներառականության համատեքստում» խորագրով միջազգային աշխատաժողովը պաշտոնապես ազդարարեց մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի և Միացյալ Նահանգների Մինեսոտայի համալսարանի համագործակցության մեկնարկը այս ոլորտում:

Մանկավարժական համալսարանում միջազգային համաժողովով ամփոփվեց ՏԵՄՊՈՒՍ-ի ՄԱՀԱԹՄԱ ծրագիրը, որին մասնակցում էին եվրոպական գործընկեր հաստատությունների ներկայացուցիչները: Գնահատելով չորս տարվա կատարած աշխատանքը, դրամաշնորհային ծրագրի իրագործման լավագույն փորձը, «Կրթության միջազգային ասոցիացիա»-յին անդամագրվելու առավելությունները և ամենակարևորը՝ նոր մասնագիտության՝ կրթության կառավարման ներմուծումը, գործընկեր արտերկրյա բուհերը պատրաստակամություն հայտնեցին շարունակել արդյունավետ համագործակցությունը:

«Կյանքը և փիլիսոփայությունը» թեմայով միջազգային երկօրյա գիտաժողովը նվիրված էր ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ծննդյան 90-ամյակին: Գիտնականը մինչև կյանքի վերջին օրը աշխատեց ի նպաստ գիտության և մանկավարժական համալսարանի: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Ռումինիայի, Հունգարիայի 70-ից ավելի հետազոտողներ և գիտնականներ: Գիտաժողովի ընթացքում ներկայացվեց ավելի քան 50 զեկուցում՝ իմացության տեսության, հաղորդակցման, փաստարկման և հռետորության, սոցիալական փիլիսոփայության, մանկավարժության ու հոգեբանության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

Ի դեպ, Մանկավարժական համալսարանի «Իմաստություն» գիտական պարբերականը գրանցված է միջազգային գիտաչափական 7 շտեմարաններում:

Մանկավարժական համալսարանի գիտական ներուժի մասին վկայում են միջազգային գրախոսվող պարբերականներում միայն 2016 թվականին տպագրված 220 հոդվածները:

Մանկավարժական համալսարանում անցկացվեց նաև արևմտահայ խոշորագույն մանկավարժ, «Նոր դպրոց»-ի հիմնադիր Հովհաննես Հինդլյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային երկօրյա գիտաժողով:

Համալսարանի գիտական գործունեության մեջ ձեռքբերումները զգալի են, իսկ աշխատանքները նոր տեմպով ու հետաքրքրությամբ կշարունակվեն եկող տարում: Հուսանք 2017 թվականը Մանկավարժական համալսարանի համար կլինի գիտական նոր ձեռքբերումների տարի:

Ուսանողական խորհուրդ

2016 թվականը ՀՊՄՀ ուսանողական խորհրդի համար լավագույն ձեռքբերումների տարի էր: Մասնավորապես տարվա առաջին եռամսյակը նշանակալից էր ուսանողական խորհրդի համար: Շուրջ 15 տարի է, ինչ անց է կացվում «Հայկյան» մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ՀՊՄՀ ուխ-ն առաջին անգամ ճանաչվեց լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին:

Երիտասարդության համաշխարհային և ուսանողության միջազգային օրերի կապակցությամբ Մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի կատարած աշխատանքներն արժանացան տարբեր պարգևների. ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ազգային ժողովի կողմից հասարակական ակտիվ գործունեություն ծավալելու համար էդիկ Գուլյանը և Հովհաննես Գուսիկյանը արժանացան պատվոգրերի, իսկ ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը Երևան քաղաքի երիտասարդության հարցերում ունեցած զգալի ներդրման և բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվեց Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալով:

2016 թվականի մյուս կարևոր ձեռքբերումը Ուսանողական ալիքի՝ Student TV-ի ստեղծումն է:

ՀՊՄՀ ուսանողական խորհուրդը կազմակերպում է գիտակրթական, մշակութային, մարզական տարաբնույթ միջոցառումներ, որոնք իբրև ուսումնական գործընթացների շարունակություն լրացնում ու հարստացնում են ուսանողների առօրյան:

ՀՊՄՀ ավագ դպրոց-հենակետային վարժարան

Համալսարանի հենակետային վարժարանի համար 2016 թվականի կարևոր իրադարձությունների շարքում կարելի է առանձնացնել այն, որ վարժարանի մի խումբ սովորողներ EC Erasmus ու «Լրացուցիչ կրթության և բանավեճերի զարգացման կենտրոնի» միջազգային համագործակցության արդյունքում Լիտվայում մասնակցեցին «Հատվող սահմաններ՝ երիտասարդության փոխազդեցություն բանավեճի միջոցով» CROSSING BOUNDARIES: YOUTH ENGAGEMENT THROUGH DEBATE ֆորումին:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի սպորտի, շախմատի և առողջ ապրելակերպի հանձնաժողովի կողմից կազմակերպված սպորտային մրցաշարին ՀՊՄՀ հենակետային վարժարանի թիմերը գրեթե բոլոր սպորտաձևերով առաջինների շարքերում էին և, բուհի 10 ֆակուլտետների հետ մրցելով, թիմային ընդհանուր հաշվարկով գրավեցին 2-րդ տեղը:

Վարժարանի շրջանավարտ Դավիթ Խատայանը ապրիլյան դիմակայության օրերին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության ընթացքում ցուցաբերած բարձր մարտական և բարոյականային հատկանիշների շնորհիվ զինվորից դարձավ հրամանատար՝ ստանալով լեյտենանտի սպայական կոչում:

ՀՊՄՀ Վ. Թոթովենցի անվան N 57 հիմնական դպրոցում էլ այս ուսումնական տարում առաջին դասարանցիների մեծ հոսք եղավ, և 96 աշակերտներից 3 առաջին դասարաններ ձևավորվեցին:

«Մանկավարժական համալսարան» մեդալ՝ վաստակաշատ դասախոսին

Համալսարանի երկարամյա դասախոս Ջուլիետա Ղափանցյանը պարգևատրեց «Մանկավարժական համալսարան» մեդալով, որը նրան հանձնեց պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Պրոռեկտորը Ջուլիետա Ղափանցյանին փոխանցեց նաև ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի շնորհակալական ուղերձը, որում ընդգծված էր դասախոսի՝ երկար տարիներ մանկավարժների տարբեր սերունդներին քաղաքական պատմության վերաբերյալ կայուն գիտելիքներով զինելու անխոնջ աշխատանքը, մանկավարժության և գիտության ոլորտում ունեցած մեծագույն ավանդը:

«Աշխատանքային արտակարգ միջավայրում կարողացել եմ սերունդներին փոխանցել ոչ միայն ակադեմիական գիտելիքներ, այլև պատրաստել նրանց կյանք մտնելու ճանապարհին»,- հպարտորեն վերհիշեց ՀՊՄՀ վաստակաշատ դասախոսը, ով մինչև այսօր հայտնի է ուսանողների հանդեպ պահանջկոտ վերաբերմունքով և ուսանողների շրջանում իր բարի համբավով:

«Պետք է սիրել, հարգել ուսանողին և հաշվի նստել նրա պահանջների և հոգեվիճակի հետ»,-ասում է Ջուլիետա Ղափանցյանը, ով մինչ օրս հետաքրքրվում և ուրախանում է հարազատ բուհի՝ Մանկավարժական համալսարանի հաջողություններով ու ձեռքբերումներով:

«Այդ օրերն իկուր չապրեցի»

Մանկավարժական համալսարանի և Արցախի պետական համալսարանի միջև համագործակցությունը շարունակվում է: Վերջերս ՀՊՄՀ-ի հեռուստառադիոլրագրության ամբիոնի դասախոս, կինոռեժիսոր Արսեն Առաքելյանը եռօրյա այցով Արցախի պետական համալսարանում էր: Արսեն Առաքելյանը հեռուստալրագրության 1-4-րդ կուրսերի ուսանողների համար անցկացրեց դասախոսություններ, սեմինարներ, կազմակերպեց ֆիլմի դիտումներ և քննարկումներ: Չորսժամյա պլանով անցկացվող դասընթացներին ուսանողները ծանոթացան լրագրության հիմունքներին, նրբություններին, լրագրության և ռեժիսուրայի ընդհանրություններին, լրագրողի և ռեժիսորի համատեղ աշխատելու հմտություններին:

Տեսական գիտելիքները ուսանողները նաև կիրառեցին գործնականում. Գանձասար վանական համալիրում ապագա հեռուստալրագրողները նկարահանեցին մի քանի ռեպորտաժներ:

«Շատ հաճելի է, որ անպարտելի մարդու տեսակը տեսնում եմ

նաև լսարանում՝ ուսանողների մեջ: Հաղթողի նրանց գենը նկատելի էր նաև ուսումնառության ընթացքում: Չնայած տիրող իրավիճակին՝ ուսանողների մտքերն ու ապագայի տեսլականը շատ լուսավոր ու պայծառ էին: Իրենք իրենց ստեղծագործական կյանքը առավել հետաքրքիր էին դարձնում, սովորելու մեծ ձգտում ու հետաքրքրություն ունեին: Այս երեք օրերի ընթացքում ես հասկացա, որ այդ օրերն իզուր չեմ ապրել»,- ասաց Արսեն Առաքելյանը:

Դասախոսը կարևորեց նման փոխանակային ծրագրերի իրականացումը՝ փաստելով, որ արդյունքը նկատելի է: «Այսօր շատ դժվար է 21-րդ դարի մարդուն զարմացնել, ինչպես նաև զարմանալ. այս այցի ընթացքում երկուսն էլ եղավ: Վստահ եմ, նրանք մեծ հաջողությունների կհասնեն»,- ամփոփեց Արսեն Առաքելյանը և հավելեց, որ համագործակցությունը ուսանողների հետ այսօր էլ շարունակվում է, սակայն արդեն համացանցում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՀՊՄՀ-ԱՐՑԱԽ

Առավել քան արժանի էին դրվատանքի

Մանկավարժական համալսարան-Արցախի գիտության, կրթության և սպորտի նախարարության համագործակցությունն ընթացիկ տարում առավել սերտացավ: Հենց այդ համատեքստում էր նաև մեր համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի ղեկավարությամբ Արցախում տեղի մանկապարտեզների դաստիարակների, տարրական դպրոցների ուսուցիչների և տնօրենների համար կազմակերպված քառօրյա վերապատրաստումները, որը Ստեփանակերտի հմ. 2 դպրոցում մեկնարկեց նոյեմբերի 1-ին: ՀՊՄՀ աշխատանքային խմբում էին ամբիոնների դասախոսներ Արմինե Միքայելյանը, Քնարիկ Հովհաննիսյանը, Կարինե Հովակիմյանը, Լուսինե Ղազարյանը, Լիանա Չոբանյանը, Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի ասիստենտ Նաիրա Մարտիրոսյանը, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ Մարիաննա Հարությունյանը:

Հատկանշականն այն էր, որ վերապատրաստվող 250 մանկավարժները խիստ դրական էին տրամադրված և աշխատանքային ժամերից հետո մեծ կարգապահությամբ ու կազմակերպված մասնակցում էին վերապատրաստման ծրագրին, որը կազմվել էր Արցախի դպրոցների տարրական դասարանների և մանկապարտեզների կրթական կարիքների հիման վրա: Արցախցի մանկավարժներին հետաքրքրում էին ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներին ու մեթոդաբանությանը, ներառական կրթության կազմակերպման առանձնահատկություններին, համակազմ դասարանների մեթոդաբանությանը, ծեռնարկներին և ուսումնական պլաններին վերաբերող հարցեր:

Հատուկ խոսակցություն ծավալվեց ուսուցչի հեղինակության ու վարկանիշի բարձրացմանն ուղղված խնդիրների մասին:

ՀՊՄՀ դասախոսները վերապատրաստումն իրականացրին ինտերակտիվ ուսուցման մեթոդներով՝ Ստեփանակերտի N 2 դպրոցում կազմակերպելով խմբային քննարկումներ, բանավեճեր, ինտերակտիվ դասախոսություններ, տեսանյութերի շնորհանդեսներ ու դրանց քննարկումներ: Աշխատանքային խումբը ուսուցիչների ու դաստիարակների համար պատրաստել էր նաև փաթեթներ ու լրացուցիչ մասնագիտական գրականություն:

Վերապատրաստման ընթացքին մասնակցում էին նաև Արցախի կրթության ր սպորտի նախարարության աշխատակիցներ և Արցախի պետական համալսարանի ուսանողներ:

Արցախի գիտության, կրթության և սպորտի նախարարությունն էլ ջանք չէր խնայել լավագույնս հոգալ վերապատրաստման կազմակերպական հարցերի մասին, միաժամանակ արժե շեշտել ԿԳ նախարարության տարրական դասարանների գծով տեսուչ Աննա Պետրոսյանի կատարած գնահատելի աշխատանքն այդ չորս օրերի ընթացքում:

Դեկան Հեղինե Խաչատրյանի տպավորություններն աննկարագրելի են այն դրական մթնոլորտից, որն ստեղծել

էին Արցախի մանկավարժները. թեև նրանք բոլորն էլ տեղեկացված էին կրթության ժամանակակից նորություններից, ապահովված էին մեթոդական նյութերով ու անհրաժեշտ դասագրքերով, բայց սիրով ու պատրաստակամությամբ «վերցնում էին» այն ամենը, ինչը մատուցվում էր իրենց Մանկավարժական համալսարանի դասախոսների կողմից:

Վերապատրաստման արդյունքները երկուստեք ամփոփվեցին Արցախի գիտության, կրթության և սպորտի նախարար Սլավա Ասրյանի հետ հանդիպման ընթացքում, որտեղ իրենց առաջարկությունները, մտահոգությունները և վերապատրաստման ընթացքում ի հայտ բերված նոր կրթական կարիքների մասին ներկայացրին հայկական երկրորդ հանրապետության վերապատրաստված մանկավարժները: Նրանք առաջարկեցին վերապատրաստել նաև Արցախի համալսարանի դասախոսներին, որպեսզի պահանջները և մոտեցումները միասնական լինեն:

«Արցախի մանկավարժներն ավելի քան արժանի էին դրվատանքի»,-ասաց ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը՝ հստակ համոզմունքով, որ Արցախի մանկավարժների հետ նմանօրինակ հանդիպումները տարբեր պարբերականությամբ կշարունակվեն:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ծաճանվեց աշխարհի ամենաերկար եռագույնը

«Կեցցե՛ այն Հայաստանը, որ վաղն է գալու». այս խոսքերով Մ. Գորգիսյանն առաջին անգամ Ազատության հրապարակում ծածանեց հայոց եռագույնը:

Դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային հերոս Մովսես Գորգիսյանի ծննդյան օրն է. հերոսն այդ օրը կդառնար 55 տարեկան: Երևանի N 158 հիմնական դպրոցում, որը կրում է Մ. Գորգիսյանի անունը,մեծ շուքով նշվեց հերոսի հոբելյանը: Փառքի պուրակում,որը նաև հերոսի մանկության տարիների պուրակն է եղել, ծաղիկներ դրվեցին նրա կիսանդրուն, և ծածանվեց աշխարհի ամենաերկար եռագույնը՝ 25 մետր երկարությամբ: Հերոսի հարազատ դպրոցում տոնական տրամադրություն էր. ամենուրեք Մովսեսի դիմանկարներն ու նրա կյանքի տարբեր իրադարձություններ լուսաբանող լուսանկարներ: Աշակերտները պատմության ուսուցչուհի Հովանուշ Խարազյանի և դպրոցի տնօրեն Արևիկ Գյուլումյանի աջակցությամբ ներկաներին հնարավորություն ընձեռեցին՝ ծանոթանալու ազգային հերոսի կյանքին և հերոսական անցյալին:

Մովսեսը հավատացած էր, որ Հայաստանի պատվանդանը հայոց պատմությունն է, նրա հեռավոր անցյալի կախարդական բանալին: «Պատմությունը,-ասում էր Մովսեսը,- ազգի այսօրվա ու վաղվա ուղեցույցն է: Հայը պետք է իմանա իր պատմությունը»: Մովսեսին վստահել էին հայրենիքի ազատության ու անկախության խնդիրը. «Հայաստանն անկախանալու է, անպայման»,-ասում էր նա:

Պատանի Մովսեսը դեռ դպրոցում սովորելու տարիներից դարձել էր Ազգային միացյալ կուսակցության երդվյալ անդամ: Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժնի ուսանող.ահա մեկ ուրիշ ժամանակ ու միջավայր, ուր Մովսեսը հասունացավ նվիրյալ հայ ու իսկական քաղաքացի: Նկարահանվում է Արման Մանարյանի «Հող և ոսկի» ֆիլմի գլխավոր դերում: Աշխատում է Գորիսի դրամատիկական թատրոնում՝ որպես գլխավոր ռեժիսոր: Մովսեսը ծնվել էր արվեստի և գեղեցիկի համար, նրա տեղը բեմն էր և թատրոնը, իսկ էությունը՝ գեղարվեստականացված կերպարներն էին, հույզերն ու ապրումները: Սակայն հայրենի երկրի ու ժողովրդի բախտորոշ իրավիճակի հարկադրանքով թողեց թատրոնը և զինվեց հրապարակախոսական գրչով ու մարտական զենքով: 1990 թվականի հունվարի 19-ին Երասխավանի կատաղի մարտերում ընկավ Մովսեսը. նա գնաց միանալու Վարդանին, Մուշեղին, Նժդեհին, Անդրանիկին:

Ավանդույթաշատ այս դպրոցի աշակերտները մեծ հպարտությամբ ու պատասխանատվությամբ էին ներկայացնում Մ. Գորգիսյանի հերոսական անցյալը: Ինչպես բոլոր ծննդյան տոները, Մովսեսի տոնն էլ բացառություն չէր. ներս բերվեց եռագույն տորթը, որի մոմերը փչելու պատիվը վստահված էր հերոսի այրիին՝ Ռուզան Գորգիսյանին:

Ծնունդդ շնորհավոր, սիրելի՛ ազգային հերոս: Թող սերունդներն այսուհետ խաղաղ ապրեն քո պատգամած անկախ Հայաստանում:

Արևիկ ԽՈՒԳԵՅԱՆ
ՀՊՄՀ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս

«Ճանապարհ դեպի անկախություն»

«Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը, հաշմանդամների կողքին» հենց այս կարգախոսով էլ միավորվել էին ՀՊՄՀ Ուսանողական խորհուրդը և «Փրկություն» հասարակական կազմակերպությունը:

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում՝ ՀՊՄՀ ուսանողական խորհրդի հրավերով թատերական ներկայացմամբ հանդես եկան «Փրկություն» ՀԿ-ի սաները, ովքեր ներկայացրին «Ճանապարհ դեպի անկախություն» խորագիրը կրող թատերական բեմադրությունը: Միջոցառման ամբողջ ընթացքում հանդիսատեսը բարձր ծափողջույններով հետևում էր սաների խաղին՝ հաճախ չկարողանալով զսպել արցունքները:

Սաները ներկայացման միջոցով պատմեցին հայ ազգի անցյալի հերոսական էջերի՝ Արցախյան գոյամարտի և քառօրյա պատերազմի մասին: Բեմադրության բոլոր դերասանները հաշմանդամություն ունեցող անձիք էին:

«Մենք շատ ենք կարևորում նմանատիպ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը: Որպես ապագա մանկավարժներ՝ մենք պետք է աջակցենք հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման գործընթացին, ականջալուր լինենք նրանց հուզող խնդիրներին, անենք ամեն հնարավորը, որ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը լցնենք նոր գույներով և օգնենք նրանց հաղթահարել կյանքում հանդիպող դժվարությունները»,- ասաց ուսանողական խորհրդի սոցիալական հանձնաժողովի նախագահ Անի Խաչատրյանը:

«Այս պատերազմը մենք վարում ենք հանուն արդարության»

Պատմության և իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ հուշ- ցերեկույթ՝ նվիրված Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանին:

«Ռոբերտի սխրանքը մեզ՝ պատմաբաններիս և ողջ հայ ժողովրդի համար այլևս մեր փառավոր էջերից է: Նրա գործած սխրանքն ապացուցեց, որ մեր երիտասարդ սերունդն ունակ է իր պապերի ու հայրերի հաղթանակը ամրապնդել, ավելացնել այդ հաղթանակը և դարձնել ա-

ռարկայական: Ռոբերտը հայրենիքին տվեց ամենաթանկը՝ իր կյանքը, իսկ ներկաներիս տվեց խաղաղ ապրելու և արարելու հնարավորություն »,- ասաց ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը: Նա շնորհակալություն հայտնելով միջոցառմանը ներկա Ռոբերտի ընտանիքի անդամներին՝ ընդգծեց. «Խոնարհիվում ենք ձեր առաջ և շնորհակալ ենք այս նյութականացված, նյութապաշտ 21-րդ դարում նման ոգեղեն, հայրենասիրությամբ օժտված զավակ դաստիարակելու համար: Ինքներս էլ պետք է այդ օրինակով դաստիարակվենք, վերադաստիարակվենք և կարողանանք անմար պահել Ռոբերտի սխրանքն ու հիշատակը»:

ՀՊՄՀ դասախոս, փոխգնդապետ Հակոբ Գևորգյանը ներկայացրեց «Քառօրյա պատերազմի հետքերով» թեմայով զեկուցում, որտեղ անդրադարձավ քառօրյա պատերազմի պատճառներին, հետևանքներին, հայ զինվորի մարտական ոգուն, նրա ազգային գաղափարական հոգեկերտվածքին, հոգեբանական աջակցությանը, թշնամուն լավ ճանաչելուն, նրա դաժանությանն ու անմարդկային գործողություններին:

«Մենք պաշտպանում ենք մեր երկիրը՝ թույլ չտալով այն պղծել ամեն ինչից զուրկ, բնազդով շարժվող մի ոհմակի: Վերջին իրադարձությունների ժամանակ հայ զինվորը ևս մեկ անգամ համոզվեց, որ իր թիկունքում ունի մի ժողովուրդ, որը ցանկացած իրավիճակում իր հետ է, իր կողքին: Սա ազգային հոգեբանական առավելությունն է, որը հայ զինվորին անհամեմատելի է դարձնում՝ անտեր ու անհայրենիք թշնամու հետ, հաղթանակը մերն է»,- ասաց Հ. Գևորգյանը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի գնդերեց Վոլոդյա սարկավագ Նազարյանը, Ռոբերտ Աբաջյանի զինծառայակից, գնդերեց Նարեկ սարկավագ Պետրոսյանը: Վերհիշելով Ռոբերտի հետ անցկացրած մի քանի դրվագ՝ նա նկատեց. «Այս պատերազմը մենք չենք սկսել, այլ մենք այն վարում ենք հանուն արդարության, և նույնիսկ անսպասելի պատերազմը չի կարող ընկճել մեզ»:

Նարեկ սարկավագ Պետրոսյանը կոչ արեց ներկաներին հաճախ աղոթել զոհվածների և հայ զինվորի համար. տերունական աղոթքով էլ ամփոփեց իր խոսքը:

«Լռությունն ամեն ինչ ասում է. մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն: Անմահության երկարությունը կախված է մարդու խիզախությունից և հայրենիքին նվիրումից: Խոնարհվում եմ, որ ունենք նման սերունդ և կարծում եմ, որ դեռ շատ Ռոբերտներ կծնվեն»,- ասաց Հայոց պատմության ամբիոնի վարիչ Աշոտ Փիլիպոսյանը:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս Մարիամ Եղյանը նկատեց, որ հերոսները մեծ ու փոքր չեն լինում, և ամեն մարդ չի կարող հերոս լինել: Հուշ-ցերեկույթը կազմակերպել էին պատմություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները՝ դասախոս Մարիամ Եղյանի գլխավորությամբ, պրակտիկայի շրջանակում և «Վարդանանց ասպետներ» №106 միջնակարգ դպրոցի աշակերտների հետ համատեղ:

Հուշ-ցերեկույթի ընթացքում ցուցադրվեց նաև Ռոբերտ Աբաջյանին նվիրված «Կյանքի համազարկ» ֆիլմը. բուհի ուսանողները «Վարդանանց ասպետներ» № 106 միջնակարգ դպրոցի աշակերտների հետ համատեղ ներկայացրին հայրենասիրական երգ ու ասմունք:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

«Հայաստանում ռուսական խոսքի օրեր» 9-րդ համաժողովը

«Հայաստանում ռուսական խոսքի օրեր» 9-րդ համաժողովի շրջանակներում դեկտեմբերի 15-ին Մանկավարժական համալսարանում ռուսաց լեզվի և գրականություն դասավանդողների, ուսուցիչների, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների համար կազմակերպվեց միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ «Ռուսաց լեզուն՝ 21-րդ դարում մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցության երաշխավոր» խորագրով:

Ներկաներին ողջունեց և ռուսաց լեզվի դերն ու կարևորությունն ընդգծեց ՀՊՄՀ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը: «Մանկավարժական համալսարանում լեզուների և հատկապես ռուսերենի նկատմամբ հատուկ վերաբերմունք կա: Դրա վկայությունն են պարբերաբար կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներն ու գիտաժողովները: Ռուսաց լեզուն այն լեզուն է, որով կարող ենք սոցիոլոգիական, մանկավարժական, փիլիսոփայական և այլ հարթակներում միասնական մոտեցումներ դրսևորել առաջացած խնդիրների լուծման համար»:

Կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց և խնդրո առարկայի շրջանակներում կատարված աշխատանքները ամփոփ ներկայացրեց Երևանում գիտության և մշակույթի Ռուսաստանյան կենտրոնի տնօրեն Մ. Ա. Կալինինը:

Այնուհետև պլենար նիստում և տարբեր մասնախմբերում ընթերցվեցին զեկուցումներ և նրանց շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն:

Մայրենիի պահպանմանը նվիրված համաժողով Կրասնոդարում

2019 թվականի նոյեմբերի 28-29-ը ՌԴ Կրասնոդարի երկրամասի Կրասնոդար քաղաքում տեղի ունեցավ «Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները ՌԴ հայ համայնքներում» տարածքային համաժողով ՀՀ սփյուռքի նախարարության, Հարավային Ռուսաստանի Կրասնոդար երկրամասի տարածքային բաժանմունքի, Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի «Արմատ» դպրոցի համագործակցության շրջանակում: Հայաստանից ժամանած պատվիրակության մեջ էր նաև ՀՊՄՀ համալսարանի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Զուլիետա Գյուլամիրյանը:

Համաժողովին մասնակցում էին երկրամասում գործող հայկական կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներ, ռուսախոս միջավայրում մայրենիի դասագրքերի հեղինակներ, համահայկական հասարակական կազմակերպություններ:

Սփյուռքում գործածվող մայրենիի մի շարք դասագրքերի հեղինակ Զուլիետա Գյուլամիրյանը հանդես եկավ «Ոչ հայկական միջավայրում ապրող հայ երեխաների մեկօրյա ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքները» խորագրով զեկուցումով:

Համաժողովին մասնակցում էին կիրակնօրյա դպրոցների և գեղագիտական դաստիարակության կենտրոնների մանկավարժներ Նովոռոսիսկ, Ռոստով, Սոչի, Անապա, Օմսկ և այլ հայաշատ քաղաքներից ներկայացուցիչներ, ովքեր դիտարկեցին հայկական համայնքների ծավալած կրթադաստիարակչական, հայապահպան գործունեության արդյունքները, խնդիրները, հաղթահարման ուղիները: «Զանգակ», «Էդիթ Պրինտ» հրատարակչությունները ներկայացրին հրատարակած դասագրքերը և ձեռնարկները, գրքեր նվիրեցին «Արմատ» դպրոցին և «Լույս» համահայկական հ/կ-ին:

Համաժողովն անցավ ջերմ և գործնական մթնոլորտում: ՌԴ -ում հայապահպան գործունեությամբ զբաղվող նվիրյալ մանկավարժները փոխանակեցին իրենց աշխատանքային ձեռքբերումները, փոքր ու մեծ հաղթանակներն ու դասավանդման երկարամյա փորձի արդյունքում մշակած մեթոդներն և դասագրքերը:

Ուշացրավ էր, որ համաժողովին մասնակից ուսուցիչների ճնշող մեծամասնությունը Մանկավարժական համալսարանի շրջանավարտներ էին: Մենք բոլորս հպարտության և երախտիքի խոսքերով էինք սկսում մեր ելույթները՝ բարձր գնահատելով համալսարանի տված գիտելիքների և մանկավարժական հմտությունների դերը որպես ուսուցիչ մեր կայացման գործում:

Արևիկ ԲԱԼԱՅԱՆ
ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի շրջանավարտ, Վիտեբսկի կիրակնօրյա հայկական դպրոցի ուսուցչուհի

Յուրահատուկ էթնոմիջավայրում

Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա. տարրական կրթություն» մասնագիտության 4-րդ կուրսի Գ և Դ խմբերում «Էթնոմանկավարժություն» առարկայի հերթական դասը նվիրված էր ազգային ավանդույթների և սովորույթների էթնոմանկավարժական ներուժի գիտակցմանն ու իմաստավորմանը: Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գրետա Հակոբյանը դասի սկզբում առանձնացրեց թեմայի առանցքային հասկացությունները, որոնք ուսանողները մեկնաբանեցին և հանգամանալից բնութագրեցին: Ընդգծվեց, որ ազգային ավանդույթների, սովորույթների, ծեսերի իմացությունն առանձնահատուկ կարևոր է արդի ժամանակաշրջանում, երբ օտար արժեքները, բարքերը, զանգվածային մշակույթի դրսևորումները, սովորույթները մուտք են գործում կենսամիջավայր՝ թելադրելով ազգային կենսակերպին ոչ բնորոշ ճաշակ, որոշ չափով այլափոխելով սերնդեսերունդ փոխանցված և սրբագործված ազգային ավանդույթներն ու սովորույթները: Աշխարհաքաղաքական արդի տեղաշարժերի, միջմշակութային կապերի ընդլայնման, հասարակական կյանքի հարաշարժության, հեռահաղորդակցման միջոցների զարգացման հետ արագանում են ավանդույթների ու սովորույթների խաթարման և ներգործության նվազեցման գործընթացները, ուստի մանկավարժական տեսանկյունից դրանց իմաստավորումն ազգային դաստիարակության կարևոր բաղադրիչ է:

Խմբային աշխատանքի միջոցով ուսանողները ներկայացրին ազգային տոներ, ավանդույթներ, սովորույթներ, առանձնացրին ավանդույթների իմացական, հուզական, գործնական կողմերը, դրանց բնորոշ ծիսական, խորհրդանշային առարկաները, վարքագծային դրսևորումները, որոնք էթնոսի սոցիալական փորձի և կենսափիլիսոփայության վերաբերյալ ճանաչողական-տեղեկատվական առատ նյութ են պարունակում: Դասը մի շարք գիտությունների՝ մշակութաբանության, ազգագրության, մանկավարժության ինտեգրում էր, որում դրսևորվեցին ուսանողների ոչ միայն գիտելիքները, այլև գործնական կարողությունները, գեղագիտական ճաշակը, երևակայությունը, ստեղծագործական ունակությունները, խոսքի մշակույթը, տեղեկատվությամբ աշխատելու, թիմային աշխատանքի հմտությունները: Յուրաքանչյուր ավանդույթի ներկայացումն ուղեկցվում էր ոչ միայն հետաքրքիր տեղեկատվությամբ, խորհրդանշական առարկաներով, ավանդույթին կամ սովորույթին բնորոշ արարողություններով, այլև մեկնաբանվում էթնոդիդակտիկական արժեքի, ճանաչողական, տեղեկատվական, զարգացնող, սոցիալական փորձի փոխանցման, դաստիարակչական, սոցիալականացնող, հանրամշակութային գործառույթների տեսանկյունից՝ որպես մանկավարժական նորմերի և դաստիարակչական գաղափարների յուրօրինակ համակարգ:

Դասի ընթացքում դրսևորվեցին նաև շնորհալի ուսանողների ձեռարվեստի կարողություններն ու հմտությունները, որոնք յուրահատուկ ազգային միջավայր ձևավորեցին:

Արժևորելով դասը՝ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Ասատրյանը հույս հայտնեց, որ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները ու հմտությունները ուսանողները հաջողությամբ կկիրառեն իրենց ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Նարա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա/տարրական կրթություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

ԵՐԵՎԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

Տարիներ շարունակ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Կուլտուրայի և Գեղարվեստական կրթության ֆակուլտետների դեկավարները ուսանողներին դասավանդելու համար հրավիրել են Հայաստանում մեծ ճանաչում ունեցող արվեստագետների, ովքեր սերունդներ են կրթել ու ճաշակ ձևավորել. Ղուկաս Չուբարյան, Էդվարդ Իսաբեկյան, Հովհաննես Զարդարյան, Լևոն Կոջոյան, Աշոտ Մելքոնյան...
Այսօր արժե հիշել այն երախտավորներին, որոնց դասախոսական սերունդն իր առաքելությունն է բերում հայ արվեստի մերօրյա նվաճումներին: Թերթի էջերում պարբերաբար կներկայացնենք հայ մշակույթի այն մեծություններին, ովքեր իրենց գործունեությամբ կապված են եղել համալսարանի հետ:
Նոր խորագիրը վարում է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ ՀԱԿՈԲՅԱՆԸ:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ԾԻՐՈՒՄ

Գեղանկարիչ Աշոտ Մելքոնյան (1930-2009թթ.)

Աշխատել է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում (1972-1985թթ.)


ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ

Աշոտ Մելքոնյանը ծնվել է 1930 թվականին Դոնի Ռոստովում: 1935 թվականին 5-ամյա տղան ընտանիքի հետ տեղափոխվում է Գյումրի: Մասնագիտությամբ երաժիշտ մայրը որդուն համակում է սիրով դեպի երաժշտությունը: Այդ սերը շնորհալի երիտասարդին ուղեկցեց մինչև իր կյանքի վերջը. նա չբաժանվեց ֆլեյտայից: Այդուամենայնիվ, Աշոտը հակվեց դեպի կերպարվեստը, հավանաբար թատերական նկարիչ հորեղբոր հորդորով: Անշուշտ, այդտեղ իր դերն ունեցավ նաև գյումրեցի բեմանկարիչ Մելիքսեթ Սվախչյանը, որի մոտ Աշոտը կատարել էր նկարչական առաջին քայլերը:

40-ական թվականների վերջերին Աշոտ Մելքոնյանն արդեն Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի սան էր, որը գերազանց դիպլոմով ավարտեց 1950 թվականին:

Աշոտի համար միանգամայն նոր աշխարհ բացվեց Գեղարվեստի պետական ինստիտուտում (այժմ ակադեմիա): Այդտեղ նա ծանոթացավ հայ կերպարվեստի մեծերի հետ՝ Մարտիրոս Սարյան, Հակոբ Կոջոյան, Հովհաննես Զարդարյան, Էդուարդ Իսաբեկյան, Բաբկեն Քոլոզյան, Հմայակ Ավետիսյան... Նրանց հետ ունեցած շփումները, ինչպես նաև Աշոտի պրպտումները համաշխարհային արվեստի պատմության շերտերում նպաստեցին նրա գեղագիտական ընկալումների և պատկերային ինքնատիպ ձևերի արտահայտմանը: Աշոտի հոգուն մոտ եղան հատկապես կենցաղային թեմաները, որոնց տպավորությունները գալիս էին դեռ մանկության օրերից: Աշոտն իր սերնդակիցներից առանձնանում է սովորական թեմաները ինքնատիպ ու բովանդակալից ներկայացնելու կարողությամբ՝ կերպարները միջավայրին զուգորդելու համոզիչ մտահղացմամբ: Շատ ջերմ է նրա մոտեցումը հատկապես մայրության թեմային. առանձնապես՝ «Սեր», «Մայրը մանկան հետ. Հանգիստ», «Սպասում», «Գարուն» ստեղծագործությունները: Դրանցում հայ կնոջ կերպարն արտացոլված է որպես հայրենի օջախի պահպանման գաղափար, որում արտահայտվում է նաև թեմայի ազգային նկարագիրը:

Շատ բանաստեղծական ու խորհրդաբանական է «Մայրը մանկան հետ. Հանգիստ», (1971թ.) կտավը: Մոր ու երեխայի միասնության և հարատևության գաղափարը կարծես թե էպիկական հնչեղություն է ստացել: Աշխարհը սկիզբ է առնում մորից ու երեխայից, իսկ մեղմ ու թափանցիկ գույներն ավելի են նպաստում պատկերի բանաստեղծական տպավորությանը:

«Գարուն» (1983 թ.) ստեղծագործության մեջ արդեն մայրն ու որդին միահյուսված են բնության զարթոնքի հետ: Մայրական գրկում փոքրիկի աչքերում երևացող հանգստությունն ու հեզությունը արտահայտում է նրա պաշտպանվածությունը: Բնության զարթոնքն ու մայրության արգասաբերության գաղափարը զարմանալի գեղեցիկ կերպով զուգորդված են կտավում: Երկու կարևոր առանձնահատկություն, որոնք նաև կյանքի հարատևման խորհուրդն են արտահատում: Ձագուկին հպված մայրը և ծաղկած ծառերը վերոնշվածի լավագույն արտահայտությունն են:

Այդ թեմայի ընդգրկման առումով հետաքրքրական է նաև 1967 թվականին ստեղծված «Ընտանիք» խմբակային դիմանկարը: Երևի թե նկարչի և ընդհանրապես հայ կերպարվեստի լավագույն կտավներից մեկը: Այն լայն ճանաչման ու գնահատման է արժանացել ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Ընտանեկան նկարների թեման համաշխարհային դասական արվեստում շատ տարածված է: Աշոտի աշխատանքը բոլորովին նման չէ «ընտանիքների» բազմաթիվ օրինակներին, որոնց հետ ծանոթ ենք արվեստի պատմությունից: Առաջին հայացքից գուցե պարզ թվացող, սակայն զգացողություններով ու համադրություններով հագեցած այս նկարը լավագույնս արտահայտում է արվեստագետի գեղագիտական մտածողությունը, նրա բանաստեղծական զգացումներն ու մեկնաբանությունները: Այստեղ անմիջականություն կա, գուցե և ավելի շատ՝ խոհափիլիսոփայական ընկալում: Ընտրելով ինքնատիպ ու համոզիչ կառուցվածք, Աշոտը այդ հարուստ գանձարանում գտել է միասնության, սիրո գաղափարի արտահայտման իր ուրույն եղանակը:

Բանաստեղծական խոհական տրամադրությունը պահպանված է նաև դիմանկարներում, որոնք ինչ-որ անտեսանելի ուժով գրավում են դիտողին: Ձերծ մնալով ավելորդություններից, լավագույնս համադրելով միջավայրն ու մարդկային անհատականությունները՝ այդ աշխատանքները մեզ տանում են դեպի զգայական մտերմիկ աշխարհը: Դրանցում տեսնում ենք խոհական մտածող կերպարների՝ կերտված լուսավոր ու թեթև մաներայով: Օրինակ՝ «Մոլդովայի» (1975 թ.) դիմանկարում ավելի շատ երազկոտ, խոհային տրամադրություն է իշխում: Իսկ ահա «Իզաբելլան» (1975թ.) ասես մարտահրավեր է նետում իր կեցվածքով: Երեխաներին նվիրված դիմանկարներում տպավորությունը փոխվում է, այդտեղ ավելի շատ դրսևորվում է մանկան հոգու պարզության ու մաքրության գաղափարը: Այս բնույթի աշխատանքներից են «Փոքրիկ ժաննան», «Մանկական դիմանկար», «Աշոտը», «Անիի դիմանկարը» և այլն:

Ունենալով նուրբ գունամտածողություն իր ներկապնակում՝ Աշոտ Մելքոնյանը կիրառել է մոխրագույնի, կապույտի, մոխրականաչավունի, դարչնագույնի նուրբ ու թափանցիկ նրբերանգներ:

Իր գեղանկարչական աշխատանքներից զատ Աշոտ Մելքոնյանը ստեղծել է նաև սքանչելի որմնանկարներ, որոնք զարդարում են Երևանի (մշակութային պալատներից մեկը), էջմիածնի Գևորգյան ճեմարանի (այժմ աստվածաբանական համալսարան), Գյումրիի մշակութային կառույցները:

Աշոտ Մելքոնյանն իր ավանդն է բերել նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտին:

1972-1985 թվականներին աշխատելով մանկավարժական ինստիտուտում (այժմ համալսարան)՝ Աշոտն իր նկարչական գիտելիքներն է փոխանցել երիտասարդներին, ովքեր այսօր շարունակում են նրա գործը: Նրա ուսանողներից շատերը ներկայումս Հայաստանի հանրապետությունում ճանաչված նկարիչներ են:

Հատկապես պետք է նշել, որ Աշոտ Մելքոնյանը հայ կերպարվեստի այն հազվադեպ երևելիներից մեկն է, որի աշխատանքները գնվել և ցուցադրվում են համաշխարհային ճանաչում ունեցող Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Հայաստանի ազգային պատկերասրահում և մշակութային այլ կենտրոններում:

Մեր խոսքը ավարտում ենք անվանի արվեստաբանների՝ Աշոտ Մելքոնյանին նվիրված տպավորիչ խոսքերով.

«...Լույսը մեղմ ստվերներին ծուլվելով արծաթ «զգեստ» է հագնում ու միջավայրին տալիս անրջային, երազային խորհուրդ»: (արվեստաբան Շահեն Խաչատրյան):

«Մարդասիրություն, նրբին բանաստեղծական աշխարհընկալում, ժամանակի սուր զգացողություն և նկարչական «մեղեդային» լեզվի ինքնատիպություն-այս ամենը Աշոտ Մելքոնյանի ստեղծագործության բնորոշ հատկանիշներն են»: (Ժողովրդական նկարիչ Մարիամ Այվազյան):

ԸՆՏԱՆԻՔ (1967)

«Աշոտ Մելքոնյանի կտավները ուժ են ստանում գունային բարեհնչողության ու ազնիվ գծանկարի նրբին ներդաշնակման շնորհիվ: Մայրության թեման, վերածնության զգացումով տոգորված, առանձնահատուկ լուծում է ստացել նրա կտավներում, որոնց շնորհիվ է հայ կնոջ համար սրբազան՝ հայրենի օջախի պահպանման գաղափարը»: (Բորիս Զուրաբով):

Լիլիթ Մաթևոսյան
Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Կերպարվեստի պատմություն և տեսություն բաժնի Մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

Նրա կեցության խորհուրդը



Կյանքի 80-րդ տարվա շեմին մահացավ գրականագետ, բանասեր, մանկավարժական մայր բուհի Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Յուրի Գրիգորի Հովհաննիսյանը, ում կենսագրությունը դեռ 70-ականներից կապված է եղել բանասիրական բաժանմունքի հետ: Արցախցի զավակը պահեց մաքուր, անբիծ նկարագիր, սիրված էր ուսանողների եւ գործընկերների կողմից:

Նրա դասախոսությունները ներկայացնում էին հայ գրականության պատմության տարբեր շրջանները՝ ժողովրդական բանահյուսությունից մինչև նորագույն ժամանակներ, իսկ դա նշանակում է՝ նա լավ գիտեր իր խոսքի արժեքը, գրականության ամենատարբեր ճանաչողական կողմերը, որոնք սիրում էր համադրել և ավելի պարզ մատուցել ուսանողական տարբեր սերունդներին:

Վստահաբար կարող ենք ասել, որ նա միշտ կողմնորոշում էր իր սաներին դեպի ազատության ու գեղեցիկի ակունքները: Առավել հակվածություն ուներ խորանալու գրական աղբյուրագիտության մեջ, վեր հանելու աննշմար մնացած մանրամասներ եւ կապել դրանք նյութից բխող ընդհանուր տրամաբանությանը, երբ խոսում էր Չարենցի, Տերյանի, գրական նորագույն շարժումների մասին:

2012 թ. մանկավարժական համալսարանի 90-ամյակի մեդալով պարգևատրվելիս Յու. Հովհաննիսյանը ընդգծել է, որ կրթական ծառայությունը իր համար եղել է կեցության խորհուրդ: Թեև երկու տարի է ընդամենը, ինչ անցել էր վաստակած հանգստի, բայց իմացական իր փորձառությունը շարունակում էր սիրով փոխանցել դասախոսների երիտասարդ սերնդին: Նույնիսկ կարելի է ասել՝ Յու. Հովհաննիսյանի և ամբիոնի կապը չէր էլ խզվել դրանից հետո: Նրա ներկայությունը ամբիոնում բոլորս ենք ընդունելու ու ճանաչելու իբրև կենսակերպ, իբրև գրականության չընդհատված դասախոսություն:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Յուրի Հովհաննիսյանը նաև «Մանկավարժական համալսարան» թերթի լավագույն ընթերցողներից էր, թղթակիցն ու բարեկամը: Դասախոսի գրած մանրապատումները հաճախակի տպագրվել են թերթի էջերում՝ մարդկային կյանքի ամենատարբեր հարցերին վերաբերող հումորով օգնելով ընթերցողին հաղթահարել հոգսաշատ կյանքի դժվարությունները, և մարդկանց ժպիտ պարգևել:

Ստորև ներկայացնում ենք ոչ թե Յու. Հովհաննիսյանի մանրապատումներից մի քանիսը, որոնց մեջ նրա կյանքն է ու կյանքի պատմությունը:

ԲԱ ԻՆՉՈ՞Ւ ՀՂՈՒՄՆԵՐ ՉԵՍ ԱՐԵԼ

Արմեն Սարգսյանը թեկնածուական ատենախոսություն պետք է պաշտպաներ «Հայ ժողովրդի պատմություն» առարկայից: Նրա ատենախոսության թեման սերտորեն կապվում է իր գիտական ղեկավար Արամ Մանուկյանի շատ վաղուց հրապարակված գրքի հետ: Սարգսյանը մտածում է, որ ղեկավարն արդեն ծերացել է և մոռացած կլինի, թե ինչ է գրել ավելի քան քսան տարի առաջ, և առատորեն օգտվում է նրա գրքից՝ հաճախ էլ բառացի արտագրելով ամբողջական էջեր:

Երբ վերջացնում է, չեմ ասում գրելը, այլ՝ արտագրելը, աշխատանքը հանձնում է իր գիտական ղեկավարին՝ նրա կարծիքն իմանալու: Մի քանի օր հետո Արամ Մանուկյանը իր մոտ է կանչում Արմեն Սարգսյանին և զայրացած ասում.

- Այս ինչ հիմարություններ ես դուրս տվել, բա ամո՞թ չի: Հիմա ես քեզ հետ ինչպե՞ս վարվեմ:

Արմեն Սարգսյանը ստիպված է լինում ասել ողջ ճշմարտությունը.

- Պարոն Մանուկյան, ինչ հիմարությունների մասին է խոսքը: Ես ձեզանից եմ արտագրել:

Արամ Մանուկյանը ժպտալով անմիջապես խոսքը փոխում է.

- Ա՛, ես էլ հենց դա էի ուզում ասել. Բա ինչո՞ւ մեկ-մեկ հղումներ չես արել:

ՀԱՃԵԼԻ ՀԵՌԱԽՈՍԱՁՐՈՒՅՑ

Կարդացել էի մեր դասախոսներից մեկի՝ Ցոլակ Սիմոնյանի նոր գիրքը: Հեղինակի հետ այնքան էլ մոտ չէի: Նա ինձնից բավականին տարիքով էր:

Մի օր զանգահարեցի տուն և ասացի.

- Ընկեր Սիմոնյան, ձեր գիրքը կարդացել եմ և շատ հավանել, բայց ունեմ նաև մի քանի մանրմունր դիտողություններ: Հիմա չգիտեմ, երբ ձեզ դիտողություն են անում, հո չե՞ք նեղանում:

Նա ժպտալով ասաց.

- Յուրի ջան, ես նեղանում եմ, երբ ինձ դիտողություն չեն անում: Այդ նշանակում է, որ գիրքս չեն կարդացել:

ՁԵՐ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՃԻՇՏ Է

Արշակին, ուսանող ընկերները ձեռ առնելով, ասում են, թե իբր Արշակը իշակ բառի հնչյունափոխված ձևն է: Դրանում համոզվելու համար նրանք խորհուրդ են տալիս մոտենալ իրենց հայոց լեզվի դասախոս, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանին և հարցնել:

Արշակն ասում է.

- Ընկեր Աբրահամյան, ճի՞շտ է, որ Արշակը իշակ բառի հնչյունափոխված ձևն է:

Աբրահամյանը նայում է, նայում Արշակին և ժպտալով ասում.

- Ձեր պարագայում ճիշտ է:

Թերթի 8-րդ էջում բացում ենք նոր խորագիր՝ «Ուսանողական օրագրից»: Ուսանողների լավագույն խոհերը, մտորումները օրագրային գրառումների տեսքով կտպագրվեն թերթում և տարիների հետ կդառնան սերունդների պատմությունը:

Սիրելի՛ ուսանողներ, ներկան ձերն է, մի՛ կորցրեք նաև վաղվա օրվա և լուսավոր ապագայի հանդեպ հավատը: Որպես ուսանող երիտասարդներ՝ ձեզ հետաքրքրող, հուզող և անհանգստացնող մտորումները կիսեք ընթերցողների հետ: Դա կօգնի ձեզ միշտ նայել առաջ Հիշեք՝ թերթը ձեր բարեկամն է ու խորհրդատուն: Միայն եղեք անկեղծ ու շիտակ. Օրագրային ձեր մեկ գրառումը կդառնա նաև ձեր տարեկիցների սեփականությունը, որով նրանց էլ կօգնեք սիրել կյանքը, անգամ ուսանողական տարիներին բնորոշ յուրահատուկ թախիծն ու այն լավագույնը, որ միայն երիտասարդական տարիները կարող են տալ:

Ձեր՝ «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

Ուսանողի օրագրից

Ինչ է սովորեցրել ինչ կյանքը...

Մարդկային կյանքը, համեմատած տիեզերքի հավերժության հետ, մի չնչին ոչինչ է, մի հիասքանչ ոչինչ, որ Արարչի ողորմածությամբ տրվում է մեզ՝ հիանալու նույն այդ տիեզերքի հարատևությամբ: Մենք հանդիսատես ենք, անմահ ստեղծագործության ականատեսներ: Մարդկային կյանքի հետ համեմատած՝ իմ կյանքն առավել ևս չնչին է, անծիր վարդաստանում ապրող չբացված մի թերթիկ, որը միասնության մեջ իր գույնն է տալիս աշխարհին: Բոլոր թերթիկներն էլ չքնաղ են, բայց շուտ են թառամում ու ընկնում, ոմանք՝ ուրախությամբ, ոմանք՝ կարոտով, ոմանք էլ՝ անհուն թախիծով:

Իսկ ինչ է սովորեցրել ինձ կյանքը... եթե սովորեցրել է, ապա շատ քիչ բան: Նա ինձ դեռևս միայն ցույց է տալիս, ծանոթացնում, հիացնում ու զարմացնում, երբեմն նաև հիասթափեցնում: Կյանքն ինձ ցույց է տվել, որ շատ հաճախ մանկական միամտությունն ու պարզությունը քեզ համար հիմարի պսակ են հյուսում, բայց չի սովորեցրել խորամանկ լինել: Նա ինձ ցույց է տվել, որ հավատարմությունը հնացած, միայն գրքերի խունացած էջերից մեզ նայող հիշողություն է, բայց չի սովորեցրել դավաճանել: Ցույց է տվել, որ անսահման հավատը մարդ արարածի նկատմամբ ծիծաղելի է, բայց չի սովորեցրել լինել կասկածամիտ: Կյանքն ինձ ցույց է տվել, որ հարգանքը երբեմն ընկալվում է որպես թուլության նշան, բայց չի սովորեցրել չհարգել:

Ես ուրախ եմ, որ կյանքը խնայել է ինձ ու չի դաստիարակել իր առօրեականությամբ, կամ որ ես վատ աշակերտ եմ ու չեմ սովորել: Բայց դեռ օրորոցում կյանքը, բոլորից թաքուն, ինձ մի գանձ տվեց, որի համար, չնայած այն ամենին, ինչ ցույց տվեց, հավետ երախտապարտ պիտի լինեմ. նա ինձ սովորեցրեց սիրել... Մորս աչքերով սովորեցրեց, որտեղ առաջին անգամ սիրո անմար ճրագներ տեսա, ու հետո... հետո կյանքս սերմնավորվեց սիրով:

Մարինե ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն մասնագիտության I-ին կուրսի ուսանողուհի

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հեռակա ուսուցմամբ սովորողների 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները և փաստաթղթերն ընդունվում են 2017 թվականի հունվարի 9-ից 27-ը:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը չի վաճառվում:
Հանձնված է տպագրության 21.12. 2016 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am